ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0025, Մխիթար Հերացի 12

Հեռ՝ (+374 12) 80-80-83
Էլ՝փոստ/E-mail info@ncdc.am

ք.Երևան

07.03.2025թ.

ՈՐՈՇՈՒՄ
թիվ 01

«Իվաֆարմ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 08625799) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Իվաֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Վաճառող) միջև 16.10.2024թ. կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2024-03-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն Վաճառողի կողմից ստանձնվել էր ջրծաղիկի դեմ պատվաստանյութի (այսուհետ՝ Ապրանք) մատակարարման պարտավորությունը՝ Պայմանագրի անբաժանելի մասը կազմող №1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա վճարման ժամանակացույց հաստատելու մասին համաձայնագիրը «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Իվաֆարմ» ՍՊԸ միջև կնքվել է 20.11.2024թ.-ին, դրանով իսկ Պայմանագրի կատարման վերջնաժամկետը սահմանվել է 20.12.2024թ.:

2024թ. նոյեմբերի 20-ին պատվաստանյութը հանձնելու նպատակով «Իվաֆարմ» ՍՊԸ-ի կողմից ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի պահեստ է հանձնվել՝ ըստ

ներկայացված փաստաթղթերի ընդամենը՝ 24,040 դեղաչափ, սակայն խմբաքանակի տեղում հաշվարկի ժամանակ փաստացի առկա է եղել 24,009 դեղաչափ:

Պատասխանատու ստորաբաժանման կողմից Գնորդի պահեստ հանձնված Ապրանքի վերաբերյալ կազմվել է բացասական եզրակացություն, որի մասին ծանուցվել է «Իվաֆարմ» ՍՊԸ-ն՝ առաջարկելով մինչև Պայմանագրով սահմանված մատակարարման վերջնաժամկետը լրանալը վերացնել արձանագրված անհամապատասխանությունները և հանձնման նպատակով Գնորդին ներկայացնել Պայմանագրի անբաժանելի մասը կազմող №1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխանող Ապրանք:

«Իվաֆարմ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում դիմել է «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին Պայմանագրի կատարման ժամկետը 30 օրով երկարաձգելու խնդրանքով, որը բավարարվել է, և կնքվել է լրացուցիչ համաձայնագիր, համաձայն որի՝ Պայմանագրի կատարման վերջնաժամկետ է սահմանվել 20.01.2025թ., սակայն Վաճառողի կողմից այդ ժամկետը լրանալու պահին հանձնման նպատակով չի ներկայացվել տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխանող Ապրանք:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը 20.02.2025թ.-ին միակողմանի լրիվ լուծել է պայմանագիրը՝ Վաճառողի կողմից պայմանագիրը էականորեն խախտելու պատճառաբանությամբ, որի մասին ծանուցումը 25.02.2025թ.-ին հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում:

Հաշվի առնելով, որ «Իվաֆարմ» ՍՊԸ-ի կողմից խախտվել է Պայմանագրով ստանձնված պարտավորությունը, որը հանգեցրել է Գնորդի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ պարբերության պահանջները, որոշում եմ՝ «Իվաֆարմ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՍՏԵՓԱՆ ԱԹՈՅԱՆ